

ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ռ Ր Ո Շ ՈՒ Մ 22/3

14 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ 18.09.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ 08.09.2014 թ-ի թիվ 1010339 ստուգման ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 18.04.2014 թ-ի թիվ 1010339 հանձնարարագրի համաձայն «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ 08.09.2014 թ-ի թիվ 1010339 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 48.580.721 դրամ:

Նշվեց նաև, որ ստուգման ակտով լրացուցիչ պարտավորություններ առաջադրելու համար հիմք է հանդիսացել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 03.07.2014 թ-ի ակտը, որի դեմ «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ կողմից ՀՀ վարչական դատարան է ներկայացվել հայցադիմում:

ՀՀ վարչական դատարանի 08.09.2014 թ-ի թիվ ՎԴ/4719/05/14 որոշման համաձայն ընկերության հայցադիմումն ընդունվել է վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ստուգման ակտի կազմման համար հիմք հանդիսացող ապացույցը՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 03.07.2014 թ-ի ակտը, վիճարկվում է դատական կարգով, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև վարչական դատավարության կարգով որոշում կայացնելը:


Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ գանգատի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Արգավանդի տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ 18.09.2014 թ-ի գանգատի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.Մ.ԻՐՈՒՄՅԱՆ